



ԵԳԻՊՏՈՍ
ՏՐԵԿԱՆ... 10
ՎՆՑԱՄՍԵԱՅ 6
—
ԲԱՃՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻՅԻ Է

ՓԻԻՆՆԻԿ

ԱՐՏԱՅԱՅԱՆ
ՏՐԵԿԱՆ... 13
ՎՆՑԱՄՍԵԱՅ 7
—
ԿՈՎԿԱՅ
ՏՐԵԿԱՆ ՐԱՂ. 5

Կ Ի Ս Ո Մ Ս Ե Ա Յ Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ո. ՏՍՐԻ

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899

ԹԻԻ 11

ՈՒՌՄԱ ԵՒ ՊՈՂՏՈՍԻ ԵՐԿՐԹՈՒՂԻՆ

Պոլսէն Օգոստոս 15 թուականով կը հեռագրեն Բարիզի Թ.ԱՍԻ լրագրին թէ՛ ուստական գէս գանը պահանջած է որ ուստ-թրքական սահմանադրութիւն վրայ մնայուն գոմիսէր մը հաստատուի քիւրտերուն պարբերական արշաւանքներուն վերջ մը դնելու համար:

Եթէ մերձեցնենք այս լուրին այն լուրջ ընդդիմադրութիւնը զոր ուստական զեռպանը կ'ընէ Պաղատաի գծին արածուածիւն՝ անգլիական կա' Փրանքո-գերմանական խմբակներու շնորհամին, կրնանք հարցնել թէ՛ պէտք է զեռպանին այդ դիմումը նկատել իբր առաջին քայլը նոր ընթացքի մը, զոր Ռուսիա նոր իրողութեանց ճնշման տակ, անհրաժեշտ գտաւ պիտի ըլլայ հեռակէլու արեւելեան գործերուն մէջ:

Իրապական շահերուն ընդհարումները Փոքր-Ասիոյ կուսանին վրայ ցորչափ սահմանափակուած էին Անգլիոյ և Գերմանիոյ միջև տակաբական մրցումի յարաբերութեամբ անձուկ շքրջանակին մէջ, Ռուսիա արևելքի գործերուն նկատմամբ առժամապէս անտարբեր, կա' տակի ճիշդը, իրերու

արդի կայսութեան պահպանումին կողմնակից տենդոտ կերպով կը շարունակէր մղել իր պայքարը ընդդէմ՝ Ահմէտ-Քրիտանիոյ քաղաքական և անտեսական գերակշռութեան Մանչուրիոյ մէջ: Ռուսական նախկին զեռպան Բէքիւնի Պ. Բալլաֆ, շնորհիւ Լի-Հունկ-Չանկի ուստաէր զգուցաններուն, յաջողեցաւ արածուածիւններ խլել Մանչուրիոյ երկաթուղիներու շինութեանց համար, հակառակ անգլիական զեռպան, Արքիթա Մարածուալի կորովի բողբոներուն: «Ե, ենգ Ռուսին» գիւնազիտութիւնը յաղթանակեց Ահմէտ-Քրիտանիոյ՝ Չինաստանի գործերուն մէջ և ուստական զեռպանին վերջին պահանջունը լինըցո-էտմէնէն (չինական արտաքին գործերուն վարչութիւնը) Մանչուրիոյ ուստական երկաթուղին ուղղակի Բէքիւնի կցելու — շարաթ մը իսկ յետոյ համբուաւար պայմանագրութեանէն, որուն համաձայն Անգլիա և Ռուսիա փոխադարձաբար յանձնառու կ'ըլլային խաղաղասիրական և հաշտ սկզբ ընթանալ չինական ինդրին մէջ, և որ սակայն ուստական սկզբունքին «ազգայնութեանց շքրջանակի» գաղափարին նախադրութիւնն էր, և շարաթ մը իսկ առաջ մեծազգայր խաղաղութեան համաժու-

ղովին գումարումէն— Անգլիոյ հանրային կարծիքին գրգռութիւնը իր գազաթնակէտը հասցուց: Այլ ամենազօր Ռուսիա իրեն կողմնակից ունէր բնական նպաստաւոր հանգամանքներ որ կրնային հակակշռել «պատերազմի ջիղին» նուազութիւնը և Սալզպէրի կառավարութիւնն, ինչպէս կը վկայեն հմուտ փորձագէտները այս կարգի նիւթերուն, խմատութիւնն ունեցաւ, անկախօրէն Չէմպըրլէնի յօխորտ ու խիզախ ընթացքէն, զէպքերը չը փութացնել Չինաստանի մէջ Ռուսիոյ զէմ թշնամութիւնները սկսելով:

Ռուսիոյ յառաջխաղացութիւնը, ճակատազրապէս իրերու ուժին հետեւանքն էր: Ռուսիա, հոն, իր տարրին մէջն է:

Սակայն իր Թայրագոյն—Արևելքի քաղաքական ծրագիրներուն — սրտնք աստիճանական քայլերն են մեծ նպատակի մը, ըստ ոմանց Ովկիանին տիրապետութիւնը հզօր նաւատորմիզի մը միջոցաւ, և, ըստ աւանդական տիրող կարծիքին՝ Հնդկաստանի զբաւումը— գործադրութիւնը կրնայ ընդհատուած նկատուիլ — այլևս Չինաստանէն ծանր լուրեր չեն համար աւան օր— շնորհիւ Փոքր—Ասիոյ մէջ գերմանական շահերուն ածումին որ Ռուսիոյ ասիական քաղաքականութեան զէմ լուրջ դժուարութիւններ հանելու բնութիւնն ունի:

Տօքո. Չանսըր, նախագահ Անատոլի երկաթուղեաց ընկերութեան, Յունիս 10ին Սուլթանին կը ներկայացնէ իր ծրագիրը և կը խնդրէ Էնկիւրիի գծին երկարաձգումը՝ Քէսապիէի, Մարաշի, Այնթապի ճամբով և անցնելով գլխաւորաբար Ուրֆայէ, Տիարպէքիւրէ, Մարախէ, Մուսուլ—Այնթապէ՝ մինչև Պաղատա: Ընկերութեան գրամական թիկունքն է, Տէօյչէ Պանք, որուն անօրէնները, չը յաջողելով համաձայնիլ իզմիր—Այալընի անգլիական ընկերութեան հետ, հարկաւոր դրամագլուխը հայ-

թայթելու համար, կը դիմեն Ֆրանսական իզմիր—Քասապայի ընկերութեան: Մարա Տին պայմանագրութիւն մը կը ստորագրուի երկու խմբակներու ներկայացուցիչներուն կողմէն: Ծրագիրը որուն վիճէլմ իր անձնական հեղինակութեան աջակցութիւնը նուիրած էր, նախապատուութիւնն գտած է Սուլթանին մօտ:

Այդ գծին առթիւ եւրոպական ազդեցութեանց պայքարը Եւրոպ—Քէօշկի մէջ՝ սուր կերպարանք մը ստացած է: Ռուսիոյ, Անգլիոյ և Ֆրանքօ—գերմանական խմբակին ներկայացուցիչները կը ջանան կորզել գիծին շինութեան արածութիւնը: Եթէ Ռուսիա և Անգլիա եւանդուն կերպով կը զբաղին այդ խնդրով, պատճառը այն է որ այդ գիծը կոչուած է կարևոր հետեւանքներ ունենալ մասնաւորապէս իրենց ասիական քաղաքականութեան համար:

Արդարև այլևս գազանիք մը չէ թէ Ռուսիա հասաւտապէս առաջադրած է Պարսկային ծոցին մէջ նաւային կայան մը ձեռք ձգել: Եփրատայ հովիտը — որ Պիքոնափիլի օրով նկատուած էր իրր միակ բնական ճանապարհը զէպի ծով, — զըլխաւորապէս Պարսկային ծոցը, — հասնելու, համոզում որ Անգլիոյ որդեգրել տուած էր թուրքիոյ պաշտպանութիւնը ընդդէմ ուսական յառաջխաղացութեան և նոր պետութեան մը կանգնումին զաղափարը թելադրած էր ազնիւ ու ազատական մտքերու — բացարձակապէս անհրաժեշտ չէ — և թերևս վասնգաւոր իսկ է — այդ նպատակին իրագործութեան համար: Ռուսիա այս կէտը այնքան լաւ ըմբռնած է որ, օգնութեամբ երկաթուղիներով երկիր գրաւելու գեղեցիկ ու հանճարեղ գիւտին, իր յոյսը և ուշադրութիւնը զարձուցած է Պարսկաստանի կողմը: Արգէն լըրջօրէն մշակած է ծրագիր մը Անգլիկասպեան երկաթուղին երկարելու, ամբողջ արևմտեան—հիւսիսային և

արևելեան—հարաւային Պարսկաստանը հատանելով՝ մինչև Պարսկային ծոցի նաւահանգիստներէն մին — Պէնտէր—Ալպաս կամ՝ Պուշիր։ Այս նպատակով կատարուած բանակցութիւնները պարսկական կառավարութեան հետ — որ արդէն նախապէս կնքուած դաշնագրութեան մը համաձայն սկզբունքով յանձնառու կ'ըլլար ոչ մէկ պետութեան, մասնաւորապէս Անգլիոյ, երկաթուղոյ ոչ մէկ արածնութիւն տալ հիւսիսային Պարսկաստանի մէջ — յաջող արդիւնքի յանգած են։

Իրաւ է թէ, Լորտ Բերքըն — որ կողմնակից ըլլալով յարձակողական քաղաքականութեան (foreign policy) կոչուեցաւ Լորտ Էլճինի այդ ծանր բեռը՝ Հնդկաստանի ֆոխ-արքայութիւնը ժառանգել այն պահուն երբ Ռուսիա սկսած էր իր պայքարը հիւսիսային Չինաստանի մէջ, երբ անգրկասպեան գիծին երկարուժը մինչև Մէրվ — Հնդկաստանի գուռները — կ'աւարտէր, երբ լեռնական Ալբերտիներու և Օրաքլայիներու ապրտամբութիւնը հազիւ վերջացած էր Սըր Ռիլեա՝ Լօքհարթի, Անկլօ—Հնդկական բանակին ընդհ. հրամանատարին միջամտութեամբը, վճարական որոշում՝ առաւ, քանի մը մարտանաւերու ուղարկումով, Ռուսիոյ պարսկական երկաթուղոյ ծրագիրն ի գերեւ հանելու։ Եւ սակայն, Ռուսիա հակառակ այս ամենուն, կրցաւ յաջողիլ, ճիշդ ժամանակին, ստանալ պարսկական նաւահանգիստի մը շնորհումը որ իբր վերջածայր (terminus) պիտի ըլլար ապագայ երկաթուղոյ գիծին։

Ինչպէս կը տեսնուի, մինչև ցարդ Ռուսիոյ ծովային ծրագիրներուն միակ հզօր արգելքը Մեծն—Բրիտանիա էր։ Արդ, Պաղտատի գծին շինութիւնը գերմանական խմբակին կողմէն, իբր քաղաքական հետեանք կրնայ ունենալ ոչ միայն Սուէզի ջրանցքին կարևորութեան նուազումը, ինչ որ Ռուսիա կը շահագրգռէր ցարչափ

Անգրսիպերական երկաթուղին աւարտած չէր և ռուսական մարտանաւերը պարտաւորուած էին անկից անցնել Ծայրագոյն—Արևելք զօրքեր փոխարելու համար, այլ մանաւանդ Ռուսիոյ դէմ՝ հզօր ու նոր հաւանական մրցակցի մը և միևնոյն ատեն Անգլիոյ համար անդնահատելի ու կարելի դաշնակցի մը երևումը Պարսկային ծոցին ափերուն վրայ։ Գերմանիա, որուն գրայնութիւնը Եւրոպիոյ մէջ արդէն Ռուսիոյ համար անախորժ, կը սպառնայ անոր ասիական գրայնին դառնալ յորժէ հետէ վիլհելմ աչք տնկած է աղւոր ու հարուստ փոքր—Ասիոյ վրայ, որ, կոչուած է Ռուսիոյ և Ամերիկայի հետ աշխարհիս շտեմարանը դառնալ։

Ուրիշ տեսակէտով մը, Ռուսիա արդէն կը կարծէ անժխտելի իրաւունքներ ստացած ըլլալ Թուրքիոյ վրայ անոր դէմ մղած պատերազմներուն հետեանքով։ Նովոյէ Վրէմիւսի զործածած լեզուն այս առթիւ՝ յստակ ու մեկին է. յարձակելով գերմանական այս սանձգութեանց վրայ, ռուսական մեծ թերթը, որ աւելի կամ նուազ հաւատարմութեամբ պաշտօնական շրջանակներու հայեացքները կը ցոլացնէ, կ'ըսէ. «Յորչափ Թուրքիա չը հատուցանէ իր Ռուսիոյ ունեցած պարտքը մինչև քսաներորդ դարու վերջը՝ երբէք ազատ չէ ուզածին պէս գործածել փոքր—Ասիան որ իր պարտքին անչարժ գրանն է»։

Ահաւասիկ թէ ինչու Չինավիէվ բացէ ի բաց թշնամական գիրք մը բռնած է Երլարզ—Քէօչկի մէջ՝ Պաղտատի գծին արածնութեան առթիւ։ Ահաւասիկ թէ ինչու ռուսական դեսպանը սկսած է նորէն յուզել քիւրտերու սովորական արշաւանքներուն խնդիրը։ Եւ վերջապէս ահաւասիկ ինչու իրաւունք ունինք կարծելու թէ Ռուսիոյ քաղաքական ուղեգիծը որուն սկզբունքն էր, հայկական ու մակեդոնական հարցերու առթիւ Թուրքիոյ իրերու տրգի կացութեան

պահպանումը, բարեչըջութիւն մը կրամ է նորանոր իրողութեանց երևումով ուր իր քաղաքական շահերը խնդրոյ առարկայ են, և թէ՛ ուսական բարձր շրջանակներուն — մասնաւորապէս զինւորական կուսակցութեան մէջ — համոզում՝ գոյացած է թէ այլևս եկած է ժամը ուր Ռուսիս պարտաւոր է ձեռնարկել գործնականապէս իր շահերը ճշգեղու և իրաւունքները ապահով կերպով հաստատելու փոքր-Սսիոյ մէջ:

Ա. Ճ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆՆԸ

1861—65 վարած գիւանական պաշտօնը՝ պարզ քարտուղարի մը պաշտօնը չէր: Մահմանադրութեան հեղինակներն ու գործադիրք լսի յօդուածներու ցանկով գիրք մը գրած էին Պատրիարքին և վարչութեան առջև, որք ո՛չ պատրաստուած էին և ո՛չ տրամադիր զայն ըստ տառին կամ ըստ ոգոյն հասկնալու և գործելու: Այդ տետրակը զիակ մ՛էր, նորահոգի տարու էր: Գիւանապետն պիտի լինէր սահմանադրութիւնը մեկնողը. նորա տրամադրութեանց համեմատ կեդրոնին և գաւառին վարչական մէն մի ճիւղի պաշտօնէութեանց և պաշտօնէից համար՝ յարմար սահմանադրական հրահանգ զծող, նոցա ուղղութիւնը խորհող, զայնս խմբագրող, լուսաբանող և ազգին պաշտօնական մարմնոյն, ժողովրդին ամեն խաւերուն, թեր ու գէ՛մ հզօր կուսակցութեանց մէջ՝ նորա ազգեցութիւնը զօրացնող ու պաշտպանող, նոցա բարուց մէջ ներմուծող և նոր օրէնքն բոցատրելու պաշտօնական լեզու հեղինակողն:

Մամուրեան՝ իւր գիւանապետութեան օրով՝ ո՛չ միայն սահմանա-

դրութեան առաջին վարժապետն կը լինի իւր ժամանակի Պատրիարքին, վարչութեանց, ժողովրդին ու մամուլին, և իւր յօրինած այլևայլ սահմանադրական հրահանգներով, հրատարակած յօդուածներով, այլ նաև հայոց գիւանական լեզուին ու գրականութեան առաջին հեղինակն:

Ինչ որ եղաւ ու ըրաւ Մետրոպոլիտոսը՝ հինգերորդ դարուն մէջ՝ զրարար լեզուին համար, եօթն տարի շարունակ արբանի գիւանատան մէջ ծառայելով ու աշխատելով, նոյնպէս և աշխարհաբարին համար ալ Մամուրեան իւր գիւանապետութեան օրով: Մեր ազգին բուն մեծ վարչապետն՝ գիւանապետն է, որ ամեն վարչութեանց աչքը, սկանչը և միտքն է, առանց որոց վարչութիւնը կոյր, խուլ, ագէտ են: Իբրև նոյն առենի ազգին պաշտօնական մարմնոց կցորդն՝ Մամուրեան միշտ ազգին ամեն կարգի նշանակելի անձանց հետ ունէր հազորակցութիւններ. անոնց խորհուրդներուն, անոնց կենցաղին, վիճարանութեան, քաղաքականութեան հմուտ էր. և այսօր նոյն այդ հին ու խորին հմտութիւնն է որ կը փայլի իւր խմբագրական խորհրդածութեանց մէջ, և երբ կը գրէ Շահնուր՝ կածես գեռ նոր գուրս ելեր է Պատրիարքարանի գիւանատունէն:

* * *

Մամուրեան իբրև կրթութեան պաշտօնեայ մեծ ծառայութիւններ մատուցած է: Ճէզպալիբեան Մկրտիչ Ամիրայի և այլոց օրով խառնուելի վարժարանին մէջ՝ իբրև Տեսուչ և զատախօս, երբ Ներսէս Պատրիարք՝ իբրև ախրացու Պօղոս, կը վարժապետէր: Փարիզի Մուրատեան վարժարանի մանրանկարովն վարած է անց և ուսուցած: Եւ երկար տարիներ Զմիւնիաի Ազգ. վարժարանը և նոցա մէջ կրթեալք նորա իմաստուն տեսչութեան և գառախօսու-

թեանց կը պարտին իրենց ուղղութիւն և հմտութիւնը: Մամուրեան յօրինած է կրթական ծրագրեր, գասական մատենաներ, ամեն կարգի գասարանաց համար, և այսօր իւր գասագրքեր իրենց տեսակին մէջ օգտակարագոյնն ու ընտիրներն են:

Իբրև գասախօս հմուտ է հայերէնէ զատ անգլիերէնի, ֆրանսերէնի. կը խօսի յունարէն. հմուտ է պամուրեան, առանին և քաղաքական տնտեսութեան՝ զոր իբրև մասնաճիւղ ուսած է Մուրատեան վարժարանին մէջ: Իբրև Տնօրէն՝ անձանձիր աշխատող, վարող, հրահանգող եղած է, իւր ուսուցչական սպասակոյսն իրեն ուղղութեան կը պարտէր միշտ մեծ դասին:

* * *

Իբրև քաղաքակրթ գրեթէ ինքն է նամանագէս Հայոց վիպական լեզուին նշանաւոր հեղինակներէն մին. սորա և սորա նմանեաց շնորհիւ է որ այսօր աշխարհաբար լեզուն իւր գրական գեղեցկութիւնն ստացած է. Մամուրեան՝ իւր թարգմանած մատենաներովն ճոխացուցած է ընթերցող ժողովրդին գաղափարաց յոյժ ազբասիկ բաւարանը. ազգայնաց ամեն խաւերուն մէջ դնուած է քաղաքակրթիչ սկզբունքներու, ազնուարար պատգմանց սերմերն: Բնախ ըստուց բոյսերու նկարագրով, վիպական իտեալներով մեր հոգիներն բարձրացուցած, զարգացուցած է, և ասով ո՛չ միայն մեր հմտութեանց՝ այլ և մեր լեզուին խի բաւարանը ճոխացուցած է իւր նորարան բացարձակեամբն և նորակերտ բառերովը: Նորայր իւր հաշակաւոր բառարանին մէջ՝ երեք անգամ Մամուրեանի շայնքով շնորհակարութեանց մին կը զնէ բառերու մասին իրեն ըրած օգնութիւնը, ոչ որ ասով և յիսոյ բան զինքն յայսօր՝ տակի շատ մատենաներ թարգմանած է. եւրօպական ար-

գի վիպական նոր գրականութեան ընտիր վէպերէն շատն թարգմանած է: Իւր գրական գործերն մեր աշխարհաբարին մատենագրութիւններն են: Աշխարհաբարի պարտն և այսպէս ունեցած է զՄամուրեան իբրև հիմնադիր:

* * *

Մամուրեան իբրև խմբագիր ալ ազգային խմբագրութեան լեզուն, ոճն ու ուղղութիւնը մարքեց. փայլեցուց ու բարձրացուց. Մամուրի և հրատարակողի բարբը, պերճաստութիւնը, հմտութիւնը նոր թուիչ մ'առաւ: Մայրիկէն և Արևելեակն Մամուրէն ասով՝ մեր խմբագրութիւնը կա՛ր լրագրական հմտութիւնը անձնական զձուձ և շահախնդիր վիճաբանութեանց, և մուրացածոյ լուրեր եւեթ հրատարակելու ստրկային դրութեան մէջ էր*: Այլ է լրագրութիւնն այլ է խմբագրութիւնը: Վրոյսի և Շահնուրի նամականին գերազանց խմբագրութեան մը իտեալներն են: Բաւական չէ մուրացածոյ լուրերն հասկարագել և զրչի խոշոր հերիւնով շուլլել, կարկտել, այլ պէտք է ունենալ հմտութեանց բազմազան շտեմարաններ, ճաշակ, ոճ, սկզբունքի, որոշեալ գաղափարներու հիմեր և անոնց վերայ կանգնել խորհրածութեանց հոյակապ շէնքեր, լուստարել երկիրն ու ժողովուրդին գիտակցութիւնը իւր շահուց, իւր պարտեաց, իւր իրաւանց վրայ և օրուան կամ ատենին քաղաքակրթութեան արգիւնքն եղող կարիքները հանրացնել, ծաւալել: Խմբագիրն զինքն ընթերցող ժողովրդին բարոյականէն և լուսերէն շատ գերազանց առաւելութիւններ ունենալու է: Մամուրեան միշտ ունեցած և ցուցած է խմբա-

(*) Ինչպէս մինչեւ յայսօր, արժանահմանք Բանի մը վարձեալ կ'ով շահագործող քերքեր: Ծ. Խ.

գրութեան արժանի հմուտ թիւն և ընթերցողներէ վեր՝ լոյս: Իբրև խմբագիր՝ Մաղիկի և Արեւելեան Մամլոյ խմբագրութենէն ի վեր ազգին ամեն կարգի խնդրոց մարտին մտանակցած է, յաճախ խնդրոյն թէ՛ առաջին քարն ինքն նետելով և թէ՛ միշտ վերջին գափնին ինքն շահելով: Գրութե ոչ ոք նոյն լրջութեամբ, չըջահայեցութեամբ, կորովով գրած է, քննադատած է, ազգային իրաց և անցից վերայ: Իւր ամէն ամիս հրատարակած խորհրդածութիւնք որք արգի լրագրաց տարեկան խորհրդածութիւնքն կ'արժեն յաճախ և ամեն ժամանակի ընթերցարան կը կազմեն, թէ՛ հին և թէ՛ նոր ամեն լրագիրք կրկին և կրկին արտատպած են, իբրև լաւագոյն ու ընտրելագոյն բացատրութիւնն ազգային զգացմանց ու մտածմանց. բաւ չէ գաղափար ունենալն, ոճն ալ ունենալու է:

Խմբագիրն քաջ գրագէտ լինելու է: Այսօր մեր գրական սեռերուն մէջ խմբագրութիւնը կամ՝ լրագրութիւնն է գրեթէ միահեծան տիրոջն: Սակայն լրագրութենէն զատ ալ ինչ տակի Սոսրոգոսեան առաջատակութիւն ընդդէմ՝ քաղաքակիրթ գրականութեան, զոր ընթերցած պահուց՝ կը կարծես թէ տակի կը բրեն քան կը գրեն մեր խմբագիրք, մանաւանդ շատ թերթերու մէջ տեսնուած մի քանի գրողներ, որք կարծես տակի տարտղեած մտածումներու գրաշարն են քան ամփոփ գաղափարաց բացատրող գրագէտն: Խմբագրական լեզուին ազնուութիւնն, շնորհքն ու գեղն ալ մեծաւ մասամբ կը պարտինք Արեւելեան Մամլոյ և անկէ առաջ Չիլինկիրեանի Մաղիկին:

Չկայ ճաշակի և ոճի տէր գրագէտ որ չունենայ այս գրական համոզման հաւատքը, ինչպէս կը վկայեն արգի լեզուին հաւաքածոյից ամեն հեղինակներ, իրենց յառաջաբաններու մէջ:

Մամուրեան իբրև խմբագիր և

մատենագիր ունի զգալու, մտածելու և բացատրելու յատուկ կերպ մը՝ որ գրական հանճարոյ միայն սեպհակուն կնիքն է: Երբէք ազգային բարձրագոյն նկատմանց, վերին շահուց դէմ գաւած չէ, այլ միշտ նոյս գաւազիրներն Յիսուսի նախանձայուզութեան խարազանովն փետած, մա'կոյ տաճարը՝ աւազակաց այր ընելէ վերձ պահած է: Այնպէս որ Արեւելեան Մամլոյ ազգային համոզմանց հանգանակն անվիճելի և յաւէտ պատկառելի է: Իւր դէմ ընդվզող ամեն ճակատ իւր խարանն ընդունած է: Ամենէն բարձր սրբապղծողին ապարանքի որմին վրայ անվեհեր գրած է՝ Ասկէ թեկեղ փարեւս:

Իբրև գրական մեծ վարդապետ՝ ամեն արժանաւոր տաղանդի հիացումն ու քաջալերն ընդունած է: Եւ անարժաններն ապտակած, խրատած, և իւր յորդորներն միշտ ուղղիչ, շինիչ եղած են:

(Շարունակելի)

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆ

Ապրիլ 25 Օգոստոս 1899

Բարեկամ, մեր տոհմային ժամանակակից պատմութեան մէջ լուսապայծառ էջ մըն ալ աւելցաւ՝ թերևս սրբելու: Չ'ըջելու համար անկէ՝ դարերէ 'ի վեր արձանագրուած ուրիշ միջին ու սե էջ մը՝ որ բնիկ հայկական ինքնավարութեան վերջին շտապիկն անյարիւր պարտութեան և բանտարկութեան տրամեցուցիչ յիշատակը կ'արթնցնէ հոյ միտքերու մէջ: Ժողովրդական միահամուտ բաղձանքի մը համեմատ — վերջին տարիներս շատ մշակուեցաւ այս տեսակ բաղձանքներ գոյացնելու մեթոտը կարգ մը մարդոց կողմէ — և թաղականութեան լոխն այլ ախամայ համակերպութեամբ՝ ո'չ ևս կը յիշուի մեր եկեղեցիին մէջ Օրմանեանի տխրահոյակ անունը: Միթէ չե՞ս կարծեր որ Պոլսոյ Պատրիարքին անուն յիշատա-

կուլթան զագարումը՝ մեր սրբավայրերուն մէջ՝ հսկայական քայլ մը եղած ըլլայ զկայի լուծումն հայկական գառնի և արժանի՝ ազամանդեայ տառերով գրոշմուկու ազգային տարեգրութեան մէջ՝ ուր արդէն այնքան հայրենասունէր ու զիւցազնական սիրագործութիւններ՝ մանաւանդ յընթացս վերջին տասնեակ տարիներուն՝ իրենց արժանավայել ակզը բռնած ու գեղազարդած են ժամանակակից հայ կեանքի կշիռը:

Սակայն ինչ որ ալ ըլլայ քու կարծիքդ այս մասին, սա ստոյգ է որ արատասահմանի մէկ ծայրէն միւսը, Դանուբէն մինչև Եկզոս և ասիկ մինչև Ամերիկա, գրեթէ ամբողջ հայ Մամուլը՝ գաղափարներու սրբատուօջ զուգորդութեամբ և համաշունչ ոգիով մը կ'ոգջունէ չը յիշորիի ահագնազորդ սրտաւմը, որու լուսաշոյ փայլատակումներու մէջէն կ'ընդհանրուի արդէն հայութեան փառայեղ վերկենցադումը:

Զարմանալի է միայն որ երբ այսպէս մէկ կողմէ, ազատ մամուլը և գաղթային զանազան կեդրոններու հայութիւնը միասիրտ և միաշունչ չը յիշորիի կենսական և հրատապ խնդրով կ'սգեորին եռանդաբոբբ, զուք հոգեկապական ստանին մեղի ու շերտ կլիմային ներքե Յովնանու քունով կը խորպաք, Սփինքսներու նախանձ ազգելու չափ անզգայ արձան կը կտրիք չը յիշորիի բնգհանուր արտայայտութեան հանգեկ և անճարակ կը մնաք ափ յափոյ կազմելու ամբոխին միահագոյն բազձանքը՝ որուն զեմ անվրեկ պիտի փշրին իյնան պաշտօնական, առաջնորդարտնական, ամիրա յական էն ամբակուռ Երիքովները:

Քարեազգարար վերջին պահուն կ'իմանամ թէ տեղույդ Առաջնորդարանին մատուցուած 400 ստորագրութիւնք կրող հանրագիր մը մասամբ սրբած է ձեր ճակտէն անդգայութեան և անտարբերութեան արատը, թէկ կը ցաւիմ ըսել որ նոյն այդ հանրագրութիւնը որ պէտք էր անքիծ ու անխարգախ ըլլալ իր պարունակած սկզբունքներն ու գաղափարները ներշնչույ զգացումին պէս, բողորովին զերծ չէ եզեր քննադատելի կէտերէ՝ ստորագրութեանց վաւերականութեան մասին, ինչպէս կը հոչակէ ձեր Պատ. Քաղ. ժողովը իր պաշտօնական յայտարարու-

թեամբ: Եւ սաուպիւ ինչ կը նշանակեն օտարագրիներու անուններ, իբր ստորագրութիւն խաչանիշներ, երկու անգամ նշանակուած համանուն անուններ, միւսայն ձեռքով գրուած մէկէ աւելի անուններ՝ հանրագրի մը տակ որ նպատակ ունի լուծել հայութեան ճակատագիրը վճուղ գերագոյն խնդիրներէն մին՝ սրպիտին է չը յիշորիի խնդիրը, և որ պէտք է զուտ և անխառն ըլլայ ոսկիի պէս՝ որու խառնուած պղինձը ինչ քանակութեամբ ալ լինի՝ միշտ բան մը կը պակսեցնէ անոր խկտկան յարգէն: Ըստ իս հանրագրին նախաձեռնարկ եղող անձերը՝ ձախող գիրքէ մը ազատելու համար երկու միջոց ունին, այն է կամ ջախջախիչ փաստերով հերքել պաշտօնական յայտարարութեան տարկութիւնները՝ բոլոր ստորագրութեանց ճշգրութիւնը և վաւերակառութիւնը հաստատելով, և կամ պատրաստել երկրորդ հանրագիր մը՝ ընդունելուութեան և անտարկելի լինելու բոլոր հանգամանքներով վիտուած, և մատուցանել զայն առ որ անկ է. ապահով եղիք որ այսպիսի օրինական սահմանվ մէջ գրուած անխարգախ հանրագրութիւն մը կամայ ակամայ լուրջ նկատողութեան կ'առնուի պաշտօնական մարմիններու կողմէ, և այսպէս զուք ալ իրենք ալ միանգամ բնդ միշտ կ'ազատիք չը յիշորիի անվերջ խնդրէն որ այնքան սուրբ կիրքեր յուգեց և տակաւին կը յուգէ շնորհիւ զայն յղացույ և ի լոյս բերույ հայրենասէր և վեհոգի անձերուն:

Երբ ապրելու կոխը օրէ օր լքուցանող և վհատեցուցիչ հանգամանք մը կ'ստանայ, երբ ժողովուրդը սպառիչ, ցաւատանջ ճիգեր թափելու ստիպուած է՝ ճարելու համար հացի փշրանք մը, կ'անակին գրպեակ մը և գլուխը գնելու որջ մը, որոնք չէ թէ առիծի երախին մէջ այլ իր աչքին առջև, իր ձեռքին տակ կ'երերան, կը վիտան, կը բազմանան և ինք՝ տխարանան ուժի, արտակարգ հնարամտութեան պէտքը կ'զգայ բնութեան այնքան առատօրէն շտայլած բարիքներէն բրդուծ մը բան կորցելու և խեղճ ու կրակ կեանքի մը գոյութիւնը ապահովելու. երբ ապրելու այս գեղեցիկ ոգորումին մէջէն յաղթապանծ ու զափնեպսակ զուրս կ'եղեն չէ թէ արտանիքի, հանճարի և ա-

առքինուձեան տի գարներ, այլ անհար, ապառ, խարդաւնանքի ու կերպի խնորով շաղուած մարդակերպներ՝ որոնք անմասնող և հանգստուէա կեանքի մը մէջ մխրճած կը մնան, ինչպէս խանութներու ցա կը բախուրին մէջ, կարճեմ հոշովը աս' բաժնան և ժողովրդականութեան բաւակամ սշախ ազապոյց մը չեն տար անոնք որ ամբոխին շահերը և իր սօնքները պաշտպանելու անչով շատ հեռուները կ'երձան, իրենց միջոցներու բնարութեան մէջ սկսալ բայրեր կ'անեն և չափէն աչելի կ'զբաղեցնեն անոր միաբար երկրորդական կարեորութիւն ունեցող խն իրներով, փոխանակ սրտ սպ' լող և կազգութիչ սկզբունքներով պնեկու գախն իր նախկին շահերը վտանգող գաւաճաններու գլխ:

Թէև մեր թաղականութիւնը կերպով մը ձեռնպահ մնաց յի յիշումի խնդրոյն մէջ, սակայն այս ձեռնդաճութեան չի հեռակրանշուշա թէ՛ ան իր աւելուքու մե մը անհամարժէտ և հասարակութեան բազմանոց և թէ կուսակցական անդամակրելի կ'ըրբ դարձաւ և անոր անդունց սրանն ու մարին մէջ վառ պահել իր սրտ վրայ հակելու, արդար աչքերով սիրտը պետիւր եւ անպր, որմ անսպասելի կերպով կ'օգտուին գոն մեր վարեարանք՝ վայելելով թագականութեան մէն մի անգամի աչալուրը հարգութիւնը՝ թէև մի քիչ սքոզեալ նպատակու: Չ'մտնամ սակայն յիշել որ թե՛ սղ. խորհրդայ վսեմ. Ասենապետին բացարձակ կամքն էր — այս տեսակ կամքեր հաս աչ կան — որ իր սրաշանակիցները խալսու պերճ ըլլան կուսակցական յարանուանու Ինններ: Կարին վսեմութեան այս կամքը ոչ միտն չի յարգուեցաւ, այլ և իր փոխանորդը ի բույսակալութեան իր պետեն՝ մենձ ազայն չէ թէ հովերը այլ փոժորիկները ս'սու գտակ, պայժեկու համար համեստ և արեանաարուտուցի մը պիտեն, որ անձեռլ բարսը գաստիտեղով հանգերձ ազգ. վարեարանին մէջ, գովելի յանգնութիւն անեցաւ բարբելու յիշեալ թաղականին յոնորա և վերսորդ մէկ արտրքին գեմ և այսպէս գոհացում գտաւ թագ սկանութեան իր'նեկիտ Ընթացոյց տաւած անարգական բնթացքին համար, թէև ի բույսակալութեան փոխ-Ասենապետ Լիկնախին:

Որչափ որ գաղափարի և կարծիքի միութիւնը կը պակսի մեր թաղականաց ըով, կատարեալ համերաշխութիւն կը տիրէ իրենց մէջ պաշտպանելու և չքմեղելու համար սխալ բայրերը հայ բեղի մը սը՝ ազգ. անտուկէն իր սասց սծ թոշակին արեանի ըլլալու համար՝ գեա շատ ու շատ պետք ունի ուսանելու Հիպոքրատի ըով. վասնզի ինչպէս կարելի է մեկնել իւր մէկ ձախող ախտաքննութիւնը սրով իր բեղական ինամաց յանձնուած հայ գաղթականներէ միտն վրայ գտնել կարճեց՝ սովորական վերքի մը տեղ՝ ժանտսիտի ահռելի միքրոպը: Այս կարճեցեալ գիտին հեռուներով անմիջապէս տեղւոյն վրայ չուգան կառավարական ու օտաւրագի բիւշկներ և քննութիւն կը կատարեն որ գաղթականաց մէջ ոչ սը կայ իանստիտ վարակեալ և սակայն խեղճ բանտարեղոց գոները փակ կը մնան: Այսպէս ի յայտ կուգայ գիտութեան աստիճանաշափը հայ բեղին՝ որ գ'երի թէ աւելի շատ մ'աք յաքնեցուցած է մէկ անգամ վարուած այցեղները տարիներ յետոյ կրկին պահանջելու ելանակը սուտեմտութեալ և ձրի գարեանի իրուունց ունեցող գաղթականներէն գոն կէ այցեղին բրցնելու: Այնտար մշտելու՝ բան թէ իր արհեստին կատարելագործութեան համար կարեւոր ելած պաշարը անբարեկու:

Միթմարական է որ մեր երկսեռ վարեարանի տարեկան հարց սքննութեանց արգիները շատ գոհացուցիչ եղաւ, շնորհիւ մտնուանդ երաժան անօրէնին և իր ուտուցչական խմբին խղամխտ աշխատութեանց, թէև արդար ըլլալու համար՝ պետք է բուշ թէ ուսանողը փոփոզելի յաջողութիւնը ցոյց շտուին մարքենի լեզուի մէջ՝ որքան աւելի փայլեց ան ուսանոց սրիչ սարկաներու քրննութեան մէջ, ասոր պատճառը բուգհանրազէս մեր աշտիւրաներու լեզուագիտութեան մտին ունեցած անյարմարութեան կամ բժամաութեան մէջ փոտակու է արգեւր...:

Հարց սքննութիւնները յետոյ տեղի ունեցաւ բարոյական հանգերձ կիւրեղեայ մէջ. նախագահութեանը Գեր. Աշտ Սրբագանի և ինեթ'այութեան երկսեռ ազգայնոց խանրագ Եւթեան, որոյ մեծ մասը, թէև հրա-

ւիրուած, սորի վրայ բաւեց իր ներկայութեան պատիւը: Տնօրէնը կտրգաց ին՝ամուլ պատրաստուած տարեկան տեղեկագիրը, որու մէջ մասնաւորապէս շեշտեց բաւական թուով ազգատիկ աշակերտաց գրական և ուտեստի պիտոյց ճրտարար հայթայթման պէտքը, ինչպէս նաև իրագիտական և բնագիտական խիստ տարրական մի քանի գործիչներու կարևորութիւնը վարժարանին մէջ:

Ինչ որ կատակ կարծած աւ գրած էի նախորդ թղթակցութեանցս մէջ ի մասին նոր թերթի մը հրատարակման՝ կատարեալ և անակնկալ իրա՛նսութիւն մը եղաւ Աւշաշաշոյսի երեսմով, որու խմբագիրը, ինչպէս կը հաստատան, տեղւոյդ եկեղեցոյն գալրասեան է եղեր: Ինչ կրտես, բարեկամ հաճեի նորութիւն մը, յառաջգիտութեան նորանշան երևոյթ մը չե՞ս գտներ Տ/Ուսցոյս—խմբագրի մը երեսմը օրագրական հրատարակին վրայ: Առ այլմ ուրիշ բան չունիմ բսեղու Աւշաշոյսի մասին՝ բայց միայն մտղթեղ որ յաջագութիւն և համակրութիւն գտնէ այն աւելի իր խնամեալ և շահեկան պարունակութեամբ՝ քան թէ այս կամ այն կուսակցութեան օտկաւնի գեր կատարելով, ինչպէս որ արդէն իր առաջին թիւին մէջ իսկ յայտարարած էր որեւէ կուսակցութեան չ՛ծառայելու առաջադրութիւնը: Դիտողութիւն մը և վերջակէտը գնեմ. որեւէ թերթի բաժանորդագրուել կամ մերեղ դայն՝ սկզբունքի և նիւթա՛յանի խնդիր է. լաւագոյն թերթեւրէն սխեալ մինչև յետնագոյն և ամենէն աննշան թերթերու խմբագիրը երբէք՝ իրաւունք չեն ստար իրենք իրենց՝ անաչնիւ կերպով վերաբերուելու իրենց թերթը մեր ժողներուն հետ և հրապարակաւ կծու և մինչև իսկ նախատական ակնազրկութիւններ ուղղելու անոնց հասցէին: Դիտողագրար Աւշաշոյս ուղած է իր առաջին թիւին մէջ իսկ բացատրութիւն մը կազմել այս բնագիտութիւն և բնագիտութեան սովորութեան, թերթը մեր ժողներուն ուղղելով մէյմէկ խօսք՝ աւելի կամ նուազ վերաւորիչ, բան մը որ լաւ տպաւորութիւն չ՛ընել զատ, ոչ թերթին վարկը կը բարձրացնէ և ոչ անոր յորատեութեան գրաւականը կրնայ լրջալ:

ՄԻՐԻԿ

Անկողնակալութիւնը կը հարկազրէ մեզ հրատարակելու մեր յարգելի թղթակցին սոյն նամակը, որուն մէջ յայտնուած ինչ ինչ կարծիքներուն ոչ բոլորովին համամիտ ենք, ընդունելով սակայն որ ամբողջ թղթակցութիւնն ստոյգ իրողութեանց շարք մը կը պարունակէ:

Ծ. Խ.

ԳԱՐՈՒՆԸ

Հնչէ՛, գարուն, սէր ու գորով,
Գուռնդ, բուրեղ ծաղիկներով.
Հովիւ վաղ վաղ ընդ առաւօտ,
Առաւ հօտը, տարաւ արօտ.
Ուլմ ու գառնուկ, սոյլով սրնգիմ
Կայտուն վերայ կանաչ գորգիմ:

Լերան ծիւներն հալիմ տակաւ,
Արծաթափայլ ջիւղ վըտակաւ
Օծաւըտոյտ՝ կողերն ի վայր
Հոսին հովտիմ ի դրախտա՛լայր.
Հոսէ՛ վըտակ, ուրբ մոլոր,
Կարկաջածայն, թաւալգըլոր:

Ծառերն՝ որոց ո՛չ էր տերև,
Կանաչագարդ՝ ծըծեն արև.
Թարմ ոստերուն վերայ թառի
Սիրանըւագ հիւրն անտառի:
Երգէ՛, սոխա՛կդ իմ երաժիշտ,
Համակելով հոգեակս ի վիշտ.....

Պարտէզ իջան հարսն ու փեսայ,
Տարփատեմչիկ ջոյգը տեսայ.
Վարդ կը քաղէր, տաք տակ համբոյր,
Ու կ՛ըմբոշխմէր սէր կենսաբոյր.
Երջանի՛կ ջոյգ, քաղեցէ՛ք վարդ,
Կարճ է կեանքը, թո՛ղ հոսի զուարթ:

Գարուն, ծաղիկ, հովիւ, սըրիմգ,
Գառն, ուլ, առուակ, մարգագետնիմթ.
Ա՛խ, այդ համայն ինձ համար չէ՛,
Ինձ՝ որոյ սիրտ կը հառաչէ.
Վանդակապատ դըրանց ետև՝
Արգելափակ շրջիմ դերև.

Ձիւներն հալին, վըտակ վըտակ
Ծաւալելով հովտիմ յատակ.

Օձապըսոյս զեռում առում՝
Իմ կեանքիս օձն է զալարում.
Հոսէ՛, սիրտ իմ, դառն արտասուք
Քեզ լոկ բաժին մընայ սե սուգ....

Պուրակն իր թարմ տերեւներով,
Սոխակն երգող սէր ու գորով.
Արեգն իր վառ շողովն, աւաղ,
Զնն ազդեր յոյս հոգւոյս նրաղ.
Ես կը սիրեմ թախծս երգել,
Դատապարտեալ մ'եմ բանտարգել.

Հարսն ու փեսայ — սիրուն ամուլ —
Վարդ ու համբոյր, տիք տարփամուլ՝
Անոյշ անցեալս յիշեցոյցին,
Հայրենի տունն, եկեղեցին.
Թո՞ղ զիս, պատկերդ իմ անցելոյս.
Բտնտարկեալ մ'եմ հեծող, անյոյս:

Ո՛վ երկնաթռիչ սուրհանգակներ,
Ծիծառնուկներ աւետարներ,
Կ'աղաչեմ, կանգ առէ՛ք, ձե՛զ եմ,
Զեմէ լըրիկ մը կը սպասեմ.
Ըսէ՛ք, տեսա՞ք իմ ընտանեակ
Տարաբընակ յԱղեքսանդրեակ.

Ա՛խ, չեմ լըսեր, կը հեռանամ,
Երբ մըտերիմքս իս կը մոռնամ,
Ծիծեռնակներն ինչո՞ւ լըսեմ,
Զէ՛, չ'եղծանիր բնութեան օրէն,
Անկեալին կա՞յ մի կարեկիր,
Հայրենիքէ՛ս եմ տարագիր:

Եղանակն է խառնում, պարուն,
Երկինք երկիր տօնեն զարուն.
Հասարակաց ճոխ սեղանէն՝
Լոկ մաղձ բաժին ինձ կը հանեն.
Գարնան՝ ցաւերս կը նորոգին
Ցըմառ տըրստում է իմ հոգին:

Ցերեկն ի մէջ քառեակ որմոց,
Սիրածներէ՛ս, ո՞հ, քեց ու մոց,
Շըջիմ. խոկամ ու երազեմ,
Թիւն օրերուս համրեմ նըսեմ.
Բանտապետ, ե՞րբ պիտ'աւարտի
Այս հիմզ տարին — վէրքն իմ սրտի —:

Գիշերն ի խորշ մութ սեմեկիս,
Ճգնաժամեր կը կրէ հոգիս.

Ճակատագի՞ր է թէ դիպուած,
Հանելուկ մ'է այս, ո՛վ Աստուած.
Բայց, ի՞նչ որ է, հարկ է որ կրեմ,
Զի սուրբ մարտի վիրաւոր եմ:

15/12/93 Ս. ԲԻԻՐԱՏ

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Կանանց կանչիւններուն ըսեցիք չկար,
կարևոր գործի մէջ էին. ամեն կողմէ
ճիշ, ամեն կողմէ ժխոր. տունը, ար-
դէն խարխուլ, փշիլու կ'սպառնար
ամեն րոպէ: Վերջապէս հիւրերը հա-
ճեցան քաշուիլ. թագաւորը՝ մէջտե-
ղէն, թագաւոր-եղբայրը քովէն կ'եր-
թար, կամ աւելի ճիշդը, կը տարուէր
անի ա՛լ հանգարտ չէր կրնար մնալ,
ճրգվրգը լած էր, քնարի ու թմբկի
դաշնակութեանց հետ էր: Յանկարծ
ողջողակ մը բարձրացաւ, «թագաւոր-
եղբայրը...» զիս կորուսած են եղեր,
եկան դտան, քնարահառ նուագածուի
մը քով ապշած մտիկ կ'ընէի դեռ:

Կը յիշեմ, պարզ ու անամպ երկնի
մը տակ կը կատարուէր հանդէսը, ամ-
բոխը կ'ընթանար, խառն ու խուռն,
մինչև որ հասանք հարսին մօրը տու-
նը, ուր հանգիստ առինք: Արշալոյսը
Պէրզինկայի սարին վրայ կախուած
կապոյտ երկնի կտորը ճերմկցնել սկը-
սած էր. աստղերը կը մարէին, այգն
էր վճիտ ու զովաշունչ, մութ ու լոյս
կը միցէին հոն: Այդ խորհրդաւոր ու
խաղաղ պահուն երանք տնէն, ու նուա-
գածուններուն հետեւելով հասանք եկե-
ղեցւոյ փողոցն, ուր լռեցին անոնք.
գաւթին մէջ խռնած բոլոր թաղեցիք.
կ'սպասէին դրանը բացուելուն, ներս
խուժելու համար. դուռը բացին, ներս
հասեցան ամենի ալիքի պէս, տեղ
չկար ատենանը. պարտաւորեցան խու-
ժել դասը, որ քահանայից ու դպրաց
յատուկ էր:

Քահանայը ու դպիրը շարուած էին
թագաւոր-թագուհի զոյգին շուրջը.
Թագուհին Կատարինէ, 14 տարեկան

աչազեղ ու վարդապետ աղջիկը: Հոն շատ խրատներ, շատ միմունջներ, շատ ընթերցումներ ու քարտիներ եղան, բայց ես մէկ բան միայն կը հասկնայի, զիտեղ քահանան որ զլոյզին ձեռքերը միացուցած, «Առեալ զձեռն Եւայի» կ'արտասանէր, կոկորդալիք ու թաւ ձայնով: Քանի օրերէ ի վեր կերած խորտիկները, լախած համադրամները, կլլած գինիները կարծես թէ առայգ ու արեկ շեշտեր շորհած էին Սիմօն երիցուն որ պատկազիրն էր: Ազմուկները նորէն բարձրացան, անհամբերութիւն մը կը նշմարուէր ամենուն վրայ. պատարագին հետ պակի արարողութիւնն ալ ասարտած էր արգէն, հարս ու փեսայ պակուած էին. ամբօրը դարս թափեցաւ ողխօրէն: Նորապակ զլոյզին ճակատներուն վրայ կը փայլէին մեկ մէկ խաչ թագուհին իր բեհեզներուն մէջ, գահարեղէն գարգերովը կը թուէր պաշտեցեալ Աստուծիկ մը: Եկեղեցւոյ գրքի գրան առջև երիւթները կեցուցած էին. մէկուն վրայ հեծաւ փեսան, իսկ միւսինը՝ հարսը. փեսան առջևէն, հարսն ալ ետևէն, իսկ թագուհի-եղբայրը մտրուկի մը վրայ, նուագածունները նորէն հնչեցուցին իրենց երգը:

Գարշեհն ենսիւմ ճիւղե
Սու պաղաւսքսն Անրկիզե
Եեհի երջ խզմէք իքսիւմ
Պիր քեօմխար կեօզլիս զըզե:
(Իհրդէն իճայ մէջ գաշտին)
(Ձուր կապեցի նարկիզին)
(Եօթ տարի ծառայեցի)
(Մի աղջկան ամուսն աչախ):

Փողոցները քանի մը յայտնի անբու առջև կանգ առինք, օգիտ ու անուշով զիմուսորդներ կային. բարեկամ ու ազգական, որանց աներուն առջև կոտորուեցան շատ մը խաղեր, հեծեալ զլոյզը փառքէ փառք բարձրացնող ներբողներ ու երգեր կը թընգացնէին փողոցները: Օղի, գինի կը մատուցուէին հարսնիքի յազարկաւոր ամբօրին. տեղ ընծայ կը տեղար երգահաններուն վրայ. հարս ու փեսայ

ձիերուն վրայ նստած, կ'սպասէին այնպէս. քանի մ'աղբականաց տներու առջև, պաշտուպատչած յարգանքը տուէր ետք՝ հասանք մեր տունը:

«Իարի՛ կ'ուզայ իժապաւորը,
Բարի՛ կ'ուզայ թագուհին»
ազազակներով ողջունուեցանք. հոն, մեր գրան առջև, հարսը ձեռքի խոշոր նուռը պինդ մը զարկաւ մեր գրան, կտօր կտօր ցիրուցան ըրաւ. կարծիր հասիկները գեղինը սիւռեցան, ամեն կողմէն մէկ ձայն միայն կը լսուէր. «Նուան պէս բաղմածին ըլլաւ, թագուհի՛. . . »:

Փառք Աստուծոյ, մտանք ներս, հարսը քոչալարդ, փեսան թագուպակ, հարսը կանանց, փեսան արանց յառկայեալ սենեակները տարուեցան: Դարձեալ սկսան նուագներն ու կատակները: Բայց, քահանայից պահանջատ չարժումներուն գահայցիչ նախապատուութիւն տալ պէտք էր. Հարսն արգէն շերտիով խառնած էր կաթմաններուն կերակուրները. հարկ էր շտապել սեղանի սպասարկութիւնը. պակազիր երիցուն կշտերը բազմած էին ուրիշ քահանաներ, բայց ինքը Սիմօն երէց, Պետրոս առաքեալն էր կարծես այն պահուն, կտրուկ օղին բերին, կ'իջիկներով մատուցին նախանար, ապա՝ կարգակիցներուն: Մաղթմանքի տարափներ կը տեղային պատկերաց գիտուն: Հանդիսականաց ցնծութիւնը բաժնել կը թուէր բնութիւնն ալ: Գարնան գառն աւետուղ, քէչ մը ցրտիկ, բայց գեղեցիկ արև մը կը ճաճանչէր: Սեղանին վրայ շարեցին պնակները, արգանակ, մատաղի ընտիր կտորներ, ձուազեղ, հերիտայ, հաւալիցք, երէ որսի խորովածոյ, թանձր ու պաղուկ մածուն, հատուղ (բրինձ փիլաւ) կային կը զարդարէին սեղանը, գինին առատօրէն կը մատուակէին. Դէմքերը կարմիր, այտերը վառուիլ, գլուխները բռնկիլ, ձայները բարձրանալ, շարժումները յաճախել, այս ամենը բնական էր տեղի ունենալ: Մէկ կողմէ շարական, միւս կողմէ

չարգի-սեսթան, կը համեմէին հան-
դիսին քաղցրութիւնը: Սեղանը օրհ-
նեց պատկազիրը, «Հոգւոցդ պէս
մաղթանք մ'արտառանեց, պսակելոյ
ու մեր ընտանեաց անունները մէկիկ
մէկիկ յիշատակելով ու օրհնելով կըն-
քեց հացիերոյթը: Պսակեայք սաբի
վրայ, կոչնականք անփոյթ ու անաար-
բեր վերսկսան իրենց զուարճութիւն-
ները:

Ս.ն օրը, նպատաւոր օգէն օգուտ
քաղելով, մեր անձեզուն սրահին վր-
այ փոսեցին կապերտներ ու մազեղէն
փոսեցներ, տանիքին ծայրը տնկեցին
զբօշակ մը, կտրիճներու երամ մը
կ'արձակէր մերթ ընդ մերթ ստոր-
ճանակներ: Գրգռուած գլուխները
նորանոր խաղեր կը խորհէին: Հծծիւն
մ'ընկաւ բազմականաց միջև, բոլորա-
ձև նստած էին ամենքն ալ և ահա՛
20-25 երիտասարդներ կանգնեցան,
ձեռք ձեռքի տուած, պարել սկսան,
պար գեղջկային, որ աւելի կ'ոգևորէր
թմբկին դափիւնովն ու փողին գոչու-
մովը: Ոտքերը զուգընթաց ելեէջնե-
րով, ձեռքերը ծածանուա թաշկի-
նակներով, գլուխները համաչափ շար-
ժուձևով կը կազմէին գեղջուկ պա-
րաւորաց պարը ու ճորտար արուես-
տին ամբողջութիւնը: Պարը՝ հրապոյր
էր բոլոր, մինչև ցոյսօր կ'երևակայեմ
այն գիւղական հանդէսն ու անսե-
թեթ զարը:

Այսպէս տեսց ութ օր, մինչև որ
պսակազիր քահանան, հանդիսաւո-
րապէս լուծեց կապերը պսակաւոր
ամբիւն: Հիւրերն արգէն քաջուած
մեկնած էին. կը մնայինք միայն մենք
ու մենք. մեր տան մէջ աւելցած էր
նոր անդամ մը, մունջ ու քողաւոր
հարս մը:

Ու հիմայ որ կը գրեմ այս տղե-
րը, աւելի կ'զգամ խորութիւնն ան-
զընդին, ուր նետուած, մարդիկներէ
վազուց լքուած, հայրենի սահմաննե-
րէն վտարուած, ընտանեկան դգուանք-
ներէ զրկուած, դատապարտուած եմ
որտամաչ անձուկներ կրելու, բանաի

մը խոժտուալէ՛մ որներուն մէջ, զո՛ւր
երազելու մանկութիւնս անհետացած,
հրճումնքներս թունաւորուած, եր-
ջանկութիւնս խոյս տուած. հոս, ան-
հաշտ ու մաշիչ միջավայրի մը մէջ,
կը խտկամ ու կը հոգամ տիրակորոյս
ընտանիք մը. աւելին, հիմայ որ ծաղ-
րածու իրականութեան ճիրաններուն
մէջ ընկած եմ, ի՞նչպէս չ'յիշեմ,
որտիս անհուն կսկիծովն ու մոգիս
փոթորկուա երևակայութեամբը, այն
տունն ուր քառորդ դար առաջ այդ
հանդէսները կատարուեցան. տունն,
որ հիմայ մխրակոյտ մ'է՛ ծխուն.
կընամ՝ մունայ իմ՝ յարկը հայրենի,
ուր այսօր, այրի մը կայ լալազին ու
սգաւոր, այրի կին մ'անտերունչ, որ
թագուհին եղած էր նկարագրած
հարսնիքիս:

Քանի՛ փորձեմ վանել մտքէս այդ
յիշատակները ախոր, այնքան աւելի
յաճախ արձանապած կը տեսնեմ աչ-
քիս առջև փառ զերեզմանին, ուր
կը ննջէ յաւիտեան փաղամեօրիկ եղ-
բայրս, հարսնիքին թագաւորը, Գէ-
որդ . . . :

Ո՛վ անողոր ժամանակ, քառորդ
դարու մէջ այս քանի՞ն փոփոխու-
թիւն, որքան աղիտաբեր աւե-
րուս . . . : Ա՛յս է մարդը. այսօր կը
ժպտի, վաղը կ'անհետի. այսօր գափ-
նիք, վաղը դժնիկ: Որքան, առաջատա
ու առպան. ահա երեք դիմակներ,
որոց ներքև կը խորտի եղկելի մարդ-
կերպարանը, և որք սակայն կը
կազմեն մարդկութեան անբաժան
տարերբը, կեանքին երրեակ պայ-
մանները:

27 Սեպտ. 93

ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ
(Շարունակելի)

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

(Ե Ա 40)

Սրբազանը, տաքնապի մէջ, զեռ ման
կուզար տախտակամաձին վրայ. վէթաննու-
րին յանձնելու հոգէն զերծ, Եարիուզ բըռ-

նուած Երիտասարդն ալ ազատեղէ ճարահատ
 ա՛լ սկսած էր խորհիլ թէ ի՞նչ պատասխան
 պիտի գրէր այն սպանական պաշտօնագրին՝
 որով կը պահանջուէին լեռնական կտրիճ-
 ները, կամ Սալիհի լեզուով, աւազակները:
 Ինք շատ լաւ համոզուած էր թէ՛ անոնք զի-
 րաւ և կամքով անձնատուր չէին ըլլար. բայց
 գիտէր նաև թէ՛ բաշան պիտի յամուէր իր
 պնդումին վրայ: Վէժանութիւն ու Երիտա-
 սարգը բաւական չէին իր խորհուրդներուն
 իրագործումին համար: Արդ ի՞նչ ընէր
 Սրբազանը, երբ առջին զիւրազրգիտ ժողո-
 վաւդը՝ Եարփազի նոր կալանաւորին թարմ
 լուրին վրայ կապած՝ ոչ միայն չպիտի յանձ-
 նէր իր կարիճները, այլ և վրէժ պիտի գոչէր
 մարդասիրտը Վարդապետային մանկակոտոր-
 գահիճ Սալիհի գեմ:

Սակայն, ժամանակը ուշ էր, բան մ'ընել
 պէտք էր. ներս մտաւ իր սենեակը, քանի մը
 բոպէ վերջ գուրս ելաւ, կանչեց փոքրաւորը.
 Կարապետ. «Ձին հանել տուր ախոռէն» ը-
 սաւ և վանքին բակն իջաւ. հագիւ թէ ձախ
 ոտքը դրած էր ասպանակին մէջ, ձին խորա-
 չումով մը վեր վեր նետուեցաւ ու քիչ մնաց
 որ վրայէն վար ձգէր Սրբազանը: Հոն, աղե-
 կրատը տեսարան մը կը պարզուէր, կին
 մը սեւերու մէջ փաթթուած, ձիուն առջև
 ծնրագիր, զոզոջաձայն կը մրմնջէր. «Տը-
 դա՛ս, Սրբազան, տղաս կուզեմ, ...»: Եպիս-
 կոպոսին զփուար եղաւ զսպել քանի մը խոշոր
 կաթիլներն արցունքը, որոնք երեսն ի վար
 զորեցան. պահ մը լուծիւնը ակրեց, բառ
 մը չ'արտասանեց, յետոյ. «Դուն հոգ մի՛
 ընէր, մայրի՛կ, ահա՛՛ բաշային քով կ'երթամ»
 ըսաւ հեծկտանքով մը, և ջանաց հեռանալ
 շուտով. սակայն, անձանօթ կինը, նախ քօ-
 ղաւոր, բացաւ երեսն ու շարունակեց իր պա-
 դատանքը. «Սրբազան: լաւ գիտցիր որ ես
 ողջ ողջ զերեզման կ'իջնեմ, եթէ տղաս Եար-
 փուզէն Վարաշ փոխադրեն. խնայուէ՛ր
 աղաւ» երևար չեմ տեսեր կուշտ, այս քանի
 տարի է, ծովերով զատուած, լեռներով բաժ-
 նուած, կարօտովը կը մաշէի ու կը հալէի.
 արդէ՞ Գ տարեկանէն թողուց զիրիս, գնաց
 պանդխտիւր, ուսում սովորելու, — բարո՛ւ խե-
 րով չ'սովորէր այդ ուսմունքը — Գ տարի աչքս
 Մատին Մայրը(*) մնաց, ա՛խ, մի՛ խօսեցնէք

(*) Անուն Զեյթունի հարաւսկողովի բլրին

զիս. պիտի ցնորիմ ու խելագարիմ: Հիմայ,
 ադա՛ս, խեղճ ազաս, արդեօք ո՞ր անգութ
 գինուորին ձեռքն ես հիմայ»: Կր խօսէր ու կը
 հեծէր: Սրբազանն ա՛լ չկրնալով հանգուրծել,
 «Հիմայ հո՛ն կ'երթամ, սղապ անպատճառ
 պիտի ազատի, մի՛ լար, մի՛ հոգար» ըսաւ,
 ձին հեծաւ նորէն ու մեկնեցաւ:

Կ'իջնէր զառիվայրի ճամբան որ շիտակ
 Չէյթուն կր տանի, երկու կողմն հովանա-
 ւորուած ուսիներէ ու սօսիներէ, բարտիներէ,
 բնկուզիներէ ու թթենիներէ: Ամեն կողմն
 ձայներ, միջատներու, թռչուններու, տերեւ-
 ներուն ու ջրերուն, որոնց վրայ վերջալոյսի
 ծիրանիները կը ծփծփային: Գառարդ ժամու
 վայրէջ ընթացքէ մը վերջ, հասաւ հիւսիսա-
 յին—արևելեան փայտէ կամրջակը, միւս եղ-
 րին անցաւ ու ս'սաւ քերել աւազուս գարեւ-
 անդի մը կողմն, որ նրբալիւծան արահետէ
 մը բացուած էր և որ կ'առաջնորդէր ուղիղ ՚ի
 Չէյթուն: Առանց հանդիպելու մէկու մը, ձին
 վարեց զէպ ի կառավարական Պաշտօնատու-
 նը, ուր անտարակոյս բաշան զեռ կ'սպասէր
 բնդունելու նամակին պատասխանը, զոր Սըբ-
 բազանը գրելու հարկ չէր տեսած, այլ ան-
 ձամբ եկած էր բերանացի պատասխանելու
 համար անոր ամեն կէտերուն:

Փոքրատուր ձին կապեց Պաշտօնատան ա-
 խոռին մէկ անկիւնը, փութով հետեցաւ Սըբ-
 բազանին, որ խրոխտաբայլ կ'եջնէր սանգու-
 խին աստիճանները: Վերը, սրահին մէջ,
 երկու սասիկաններ յարգանօք մօտեցան ու
 դուս մը բացին, ուսկից ներս մտաւ: Բաշան
 անակնկալի մ'առջև գտնուողի մը ձևով,
 յանկարծ ոտքի կայնեցաւ քարկն առաւ Սըբ-
 բազանին, ու ձեռքովը նստեցուց իր բովի
 թիկնաթոռին վրայ. նախ, քաղաքալարու-
 թեան սովորական հարց—պատասխաններ,
 յետոյ, քանի մը բոպէ լուծիւն, զոր վերջա-
 պէս, բաշան ընդհատելով «Սրբազան էֆէնտի
 այսօր յատկապէս ուշացուցի դարձս, յուսա-
 լով ստանալ Ձեր պատասխանը, զոր խոստա-
 ցած էիք դրել մինչև իրիկուն. ո՛րչափ զոհ եմ
 որ հիմայ զՁեզ անձամբ տեսնելու հաճոյքը
 կը վայելեմ:

— Բաշա՛ էֆէնտի, խորհեցայ որ զբաւար
 պատասխանելու համար քանի մը թերթեր
 պէտք էին սեցնել. այնքան շատ են Ձեր
 որուն գազարեկն կ'անցնի Մարաշի ճամբան:

պահանջներուն զեմ մեր առարկութիւնները :

— Զարմանք... : Հոս անպամբռեղէն ելաւ և նորէն նստաւ, թեկն կարմիր հով մ'անցաւ երեսէն. ու շարունակեց. « Ի՞նչ առարկութիւն կրնաք ունենալ բարձրագոյն հրամանի մը զեմ որ կայսերական է. և հետեաբար, վերջնական ու անպանալի :

— Բայց, ներեցէ՛ք բաշա, (կեղծ ու բանագրօսիկ խլիտով) նախ լսեցէ՛ք, յետոյ վճռեցէք :

— Շատ աղէկ, խօսեցէք նայիմ :

— Գիտե՞ք որ զիւրին չէ անմիջապէս ի գործ դնել կառավարութեան հրամանները, մանաւանդ ժողովրդի մը մէջ, որ զեռ նոր պիտի ընտելանայ համակերպութեան. ասի ճշմարտութիւն մ'է : Կը հաւատամ որ Գուք, Տէրութեան հաւատարիմ ու գործունեայ բարձր պաշտօնեայ էք, պարտիք արագօրէն և անթերի կատարել այն ամեն հրամանները, որ կ'արձակուին ի հարկէ հարատակներուն օգտին ու բարեոյն համար :

Բաշան անհամբեր ու կոշտ շարժումով մը ընդմիջելով.

— Կ'աղաչեմ, Սրբազա՛ն, կարճ կ'ապեցէք, շատ ուշ է, հիմայ մութը կը կոխէ, զօրանոց պիտի դառնամ :

— Ի՛նչ ուրեմն, (արհամարհոտ շեշտով) թուրքերէնը կ'ուզէ՞ք իմանալ. մենք աւազակներ չունինք, այլ լեւոնցի կարիճներ :

— Իրա՛ւ կ'ըսէք :

— Անշուշտ :

— Ուրեմն աւազակները չպիտի յանձնէք, հասկցանք :

— Բաշա՛, այդ կերպով բան չ'ըմնար, բարեացակամութիւն պէտք է :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Ըսել կուզեմ թէ՛ Զէյթունցիք արդէն զրգոտած են, և գիտե՞ք ինչու :

— Չեմ ուզեր գիտնալ :

— Տարակոյս չկայ, Չեր գործին չ'գար գիտնալ. 534 սնամեղ մանկիկներ զոհ տալէ վերջ... :

— Խնդրէն կը շեղիք Սրբազա՛ն, մէկ բառով կրնաք հասկընել, հիմայ աւազակները պիտի յանձնէ՞ք թէ ո՛չ :

— Աւազակ չունինք մենք. դուք ոստիկան ունիք, հրաման ունիք, զէնք ունիք. բռնեցէք (եթէ կան)

— Չպիտի նեղանաք եթէ կ'ասկածի տակ

զնեմ Չեր անկեղծութիւնն ու հաւատարմութիւնը :

— Ինչու՞ նեղանամ, այլ միայն քանի որ այդպէս է, աւելորդ ու անտեղի կը զտնեմ ներշնչութիւնս պաշտօնատան մը մէջ սրուն տիրոջը, կառավարութեան վստահութիւնը չեմ վայելեր... :

Վերջին բառը բերանն էր, Գայմագամի փոխանորդը — Գայմագամը պաշտօնանկ էր այն ատեն — Գասարի Պէյ Պայագլիայի Չատէ Ահմէտ բաշայի տղան, թուխ, կարմիր, կըր դեմքով, կասկածոտ աչքերով, ներս մտաւ ու բարեեց, մինչդեռ եպիսկոպոսը թաշկինակով կը սրբէր յարգ քրտինքը, որ կը հոսէր ճակատէն : Այս Գասարի Պէյը յատկապէս փոխանորդ կարգուած էր Զէյթունի գայմագամութեան, որպէսզի զիւրացնէր զործարկութիւնը ճրագրին զոր յղացած էին Հալէպի նահանգապետն Արիֆ և Մարաշի գաւառապետը Սալիհ : Գասարի Պէյ, հնարամիտ էր ու լեռնականաց ծանօթ իբրև Զէյթունի համակիր Պայագլիայի ցեղին միակ շառաւիղը, Զէյթունի բարեկամ ու աջակից Ահմէտ բաշայի անգրանիկ որդին, որ վաղուց մշակած էր բարուք յարաբերութիւններ լեւոնական որեարին հետ, այնպէս որ ամեն դատարարներուն մէջ, մեծարանք ու համակրութիւն պիտի գտնուէր :

Քաղաքավարական քանի մը հարցումներէ վերջ երբ եպիսկոպոսը պատրաստուեցաւ մեկնելու, բաշան աչքերը շփշփելով, մեղմով մ'ըսաւ.

— Սրբազան, կ'երթա՞ք, այսպէս առանց բան մ'ըսելու :

— Բաշա՛, ես ամեն բան ըսի, ո՛րիչ ըսելիք չունիմ :

— Աւազակներուն պաշտպանութիւն կ'ընէք ուրեմն :

— Կ'երկրորդէք նոյն անարգանքը, զոր չեմ յուսար չ'փոխարինել, երբ պատեհ ափժը ներկայանայ : Գուք կ'անարգէք եկեղեցական մը, որմէ սակայն նեցուկ կ'սկսիկալէք :

Ես, քա՛ւ լիցի, երբէք անարգելու գիտում չունիմ Չեղ նման բարձրաստիճան եկեղեցան կան մը, զոր ընդհակառակը կը յարգեմ և նոյն յարգանք է որ կը խնդրեմ Չեր աջակցութիւնը, այս երկրին սէջ վրդովեալ խաղաղութիւնը վերահաստատելու համար. այս սղ

ինչով կ'ըլլայ եթէ ոչ աւագակները նուաձնելով:

— Շատ ազէկ, Եարփուզ ձերբակալել տրուած Երփտաւորին ալ աւագակ էր որ իր բարեկիրթ ընտանիքովը կ'ենթարկուի զինուորական խստութիւններու:

— Տեսնենք, Մարտշ վերադարձիս եթէ քննութիւնը հաստատեն անոր անմեղութիւնը, ամիջնապէս կ'արձակեմ:

— Բայց բաշա՛, պէտք է փութացնել այդ արձակումը, եթէ չէք խոտեր գծուարութիւնները որք կրնան ծագիլ անոր ձերբակալումէն:

— Այո՛, այո՛, միայն թէ գուք ալ պէտք է փութով յանձնէք աւագակները, որոց գոյութիւնը մշտապէս վտանգ մ'է երկրին հանդարտութեան:

(Շարունակելի)

ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿ. ԱՐԱՔԿԵՐՑԻՈՅ

Տիար Խմբագիր Փիլիսիկի

Կարմիր Խաչի ընկերութիւնը յորմէ հետէ զազրեցուցած է իւր մարդասիրական նպատուը Արաքիկի Ազգ. Որբանոցին համար, նորա արգահատելի վիճակը խիստ սրտաճմլիկ կը նկարագրէ տեղւոյն Առաջ. Տեղապահ Ս. Հայրն, իւր առ իս և առ Արաքիկի բոլոր ազգայինս ուղղեալ նամակներուն մէջ, և մասնաւորապէս իմ միջոցաւ նոցա և ուրիշ բարեսէր ազգայնոց մարդասէր զթուլթիւնը կը հայցէ:

Ոյր սակս ընկերանալով Մեծ. Մհ. Կարապետ էֆ. Տ. Աղամեանի հետ, հանգանակութեամբ հետեւեալ նպատակներն ընդունեցինք և հետզհետէ կ'ընդունինք: Բիւրազան բարեմազթութեամբ հանգերձ, իբր նուիրական պարտաւորութիւն, կանխաւ մեր խորին շնորհակալիքը կը յայտնենք նոցա որ կարգ մը անգութ ապիրատներու նման չ'մերժելով, շատ թէ քիչ, իրենց լումաներովը զոհ կացուցին զմեզ. և բուսական է որ սրտով կը մասնակցէին, և երբէք չէին սնապարծեր «Մենք մեր շուրջը գրո-

նուող որբերը նայինք, շատ է» ըսելով. ինչ որ ճիշդ չըլլալը քաջ գիտեմ:

Եւ զիտնալով թէ գուք սիրող էք այսպիսի մարդասիրական ձեռնարկներու, կուգամ խնդրել որ բարեհաճիք ազգասիրաբար շնորհել անկրն մը Ձեր պատուական Հանդիսին մէջ յայտարարութեանս համար:

Մնամ աղօթարար
ԵՉՆԻԿ ՔՉՆՅ. ՊԱՆՈՒՆԻ

Արժ, Տ. Եղնիկ Քահանայ Պալուսիի և իր գործակից Տիար Կարապետ Տ. Աղամեանի սոյն ձեռնարկը գովեստի և քաջալիրութեան արժանի նկատուելով, հաճութեամբ պիտի հրատարակենք յաջորդ թուով (տեղւոյն անձկութեան պատճառաւ) խմբագրութեանս զրկուած անուններու ցանկը, զոր կը մաղթենք ստուարացած տեսնել ՚ի մտայ սրիշ որբասէր ու զթոտ նուիրատուներու անուններով:

ՆԱՄԱԿ ԳՍԶԻՐԷԻ ԱՂՔԱՍԱՆՆԱՄԷՆ

... Տիար Խմբագիր
Փիլիսիկ ... կիտամեայ Հանդիսին:

Խնդրեմք որ հետեւալը հաճիք հրատարակել Ձեր անկողմնակալ և ազգասուէր Հանդիսին մէջ, յանդորրութիւն սրտի ուղղամիտ ազգայնոց:

Իրաւունք պատուական լրագրի անցեալ 50 թիւ թերթին մէջ Ոսկան Նաղար ստորագրութեամբ յօդուածագիր մը կարգ մը անստոյգ յայտնութիւններով բաւական նախատինք բրած էր Պէնլեանի նման բազմամեայ գերասանի մը, որուն ճշմարտապէս միշտ երախտապարտ է հայկական թատերաբեմը:

Ի մէջ այլոց տեղւոյս Բնթիւրցասիրաց Պատ. Ընկերութիւնը Պէնլեանի խաղալիկ նկատել տալէ ետև իբր ապացուցեալ ճշմարտութիւն կը յաւերու հետեւալը, գոր իւր ամբողջութեամբ յառաջ կը բերենք. «Արհանահաւատ աղբիւրներէ կը կը տեղեկանանք թէ, — խօսքերն հասկնալն ու քննադատելն ընթերցողաց կը թողունք—

տեղոյս Աղբատահնամի Օբերայի խտնվեալին մէջ Ընթ.ի վարչութեան կաշմանկերպած ներկայացումէն քանի մ'օր առաջ արուած ներկայացումը որը նոյնպէս մտաւարապէս 70 սկի փաստաւ սովելոյց համար քանի մ'օր յետոյ արուած ներկայացմանը, գարձեալ այս գերնսան Պէնչեանի գարձուածքն է եղեր, գարձեալ սնոր մատը խտն է եղեր այս գործին մէջ. որը ինչ ինչ միջոցներով յաջողեր է համուել Աղբատահնամի վարչութիւնը»: Գրեթէ միենայն խօսքերը ի վերջոյ կրկնելով կ'ըսէ. «Փոնտանի 73ի 130 սկիւոյ գումար մը կը սպասուէր Ընթ.ի վարչութեան տուած ներկայացումէն, եթէ ինչպէս կը հաստատեն, քանի մ'օր առաջ Օբերայ խտնվեալին մէջ շարուէր Աղբատահնամի ներկայացումը»: Քննադատ բլաշու մասին քնու իրենունք չիայ հակառակելու. միայն թէ ինչպէս ինքը կ'ըսէ «ուղղամիտ քննադատութիւնը միայն պայմանն է յառաջ գիմուլթեան», եթէ կ'ընդունի այսպէս, պետք է նաև ընդունիլ թէ՛ ուղղամիտ քննադատութիւն մը հարկ անհրաժեշտ է որ բացարձ ճշմարտութեան վրայ հիմնուած բլաշու, և ոչ չգիտցողի մը պէս ըսել թէ «Պէնչեանի գարձուածքն է եղեր, մատը մէջն է եղեր», կարծեմք լաւ խորհող մը, ստուգութեան նախանձսխնդիր մի, և անկողնեակոյ յնութեցող մը կը վարանի այս օրինակի գայթակիցեցողիչ գրուածոց հաստ ընձայել: Իսկ գալով բնկերութեանս վերադրեալ խոսքերուն, հարկալրեալ կը յայտարարենք թէ կը փափաքեկինք որ այդ Պարոնը գիտնար թէ՛ Պէնչեանի խումբը իր ամբողջութեամբը գրամական մեծ գոհոգութիւն բրու մեր տուած ներկայացման ծանուցը, որոյ համար այեմ հարկ կը զգանք ընկերութեանս շնորհակալիքն յայտնել հրապարակաւ սա անկեղծ յայտնութեամբ թէ՛ Պէնչեանի իր ներկայ վիճակին մէջ ըրած գոհոգութիւնը այրի կնոջ Գրիստոսի գանձանակին մէջ ձգած լումային կը նմանի, որ թէպէտ քիչ, սակայն լեցոց զանի, վասնզի մենք ինչ որ ալ ըլլար, ստիպուած էինք ներկայացումը տալու, զոր գիտնալով Պէնչեան, այդ պէտքը իւր շահագործմանը գործիք կամ միջոց չըրու իւր ներկայ վիճակին մէջ. ահա ազգային և մարդասիրական առաքինութիւն մը,

զոր ճանչցողները միայն գիտե՛ն գնահատել:

Արդ հիմնապէս սուտ է ըսել թէ «ինչ ինչ միջոցներով յաջողեր է համուել Աղբատահնամի վարչութիւնը»:

Կը ցաւինք որ, առանց Ընթերցասիրաց և Աղբատահնամի վարչութեանց պիմելու և պաշտնական տեղեկութիւն առնելու, վերացաբար ուզածը գրած է իբր փաստ «մատը մէջն է եղեր» բաւելով:

Ահաւասիկ Աղբ. և Ընթ.ի բնկերութեանց տուած ներկայացման պատմական իրողութիւնը զոր հարկադրութեամբ կը յայտնենք:

Ընկերութիւնս խիստ կանուխէն չիրցաւ մարգարէանալ թէ, Ընթ.ի Պատ. վարչութիւնը ի նպաստ վանի Հայ սովելոյց ներկայացում պիտի տայ, ուստի բաւ իւր կանոնագրի, 1898ի Գեկտ. 15էն սկսու ձեռնարկութեան և հաշիւ կարողացաւ Մայիս 8ին կնտավորական հրամանալիքը ձեռք բերել, գրեթէ չորս ու կէս ամիս աշխատելէ ետք, և տտոր համար 3-6 օրէն աւելի միջոց ալ չունեցաւ տոմսակաց բաշխմանը համար, հետեարար իրեն ալ օգտակար չեղաւ:

Ա. որ միտնգամ սկսած էր, չէր կրնար ետ կիմալ:

Բ. Ընթ.ի տոմսակցներն ալ ձկան բաւ նուիլ մեր տոմսակաց հեա:

Արդ այս տեսութեամբ կարծեմք պետք էր որ Ընթ.ի վարչութիւնը կամ խիստ կանուխէն սկսէր, որ գիտնայինք և թերևս համախորհուրդ վարուէինք և կամ առաջնութեան իրաւամբ գաղղեցնէր ներկայացումը, որ չփետուէինք: Պաշտնական գրութիւնը մեր բսածը կը հաստատեն. ուստի կը ցաւինք որ՝ եթէ վանի սովելոյց մէջ Օհաննէս Թորոս կայ և մեյ համարին հայեր են, Գահեղէի գաղթական սովելոյց մէջ ալ մահամերձ կարտտեալներ կան նոյն առնունք կրող և մեզ համարին հայեր են. ուրեմ ինչ խղճահար խնդիր համարին ելլարց մէջ, մին առնել և միւսն թողուլ, այս՝ ցուցամուլութեան աւելի բան մը չնշահակեր:


Ի պիմաց

Գործ. Ժողովոյ Աղբատահնամ Ընկ.

Գահեղէի Հայոց
(ԿՆԻՔ ԵՒ ՍՏՈՒՂԳՐԱԹԻՒՆԵՐ)

Le Gérant, J. MUNIER

ԹԷՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.



48, Շարհ Ապս-իւլ-Ազիգ, 48

Սոյն բարեհաճաւ փաճառատան շուրջ 20 տարուան գոյութիւնը Պոլսոյ մէջ, այս տարի ալ տեղս փանտաճիզ մը բացած ըլլալը՝ զօրաւոր ապացոյց մ'են իր ապրանաց ազ նուութեան, զիններու շափաւորութեան և տեւիկն, յաճախորդաց գոհ մնալուն. աւելցրնելով այս յատկութեանց վրայ Սէյլանէն, Ճափաչէն, Չինաստանէն ու Հնդկաստանէն ընտիր ապրանքներ ուղղակի ներմուծելու առաւելութիւնը, այս կարեւոր հաստատութիւնը կարճ ժամանակի մէջ արժանացած է հանրային հավակրանաց և պատիւ կը բերէ տեղւոյս ազգայնութեան:

Պատ. յաճախորդաց. աւելի գոհացում տալու համար, վերջերս յատկապէս Լոնտոնէն բերել տուած են ընտիր թէյեր ամեն եղանակի մանաւանդ ամառուան համար:

Կ'ուզէ՞ք ստուգել ներկայ յայտարարութեան պարունակութիւնը, հաճեցէ՞ք անձամբ երթալ յիշեալ փաճառատունը, ուր իրրեւ փորձ՝ ձեր ներկայութեան կը պատրաստուի և կը մատուցուի մէկ, եթէ կուզէք երկու գաւաթ թէյ:

Սոյն փաճառատունը՝ Տիկին Աննա Ռաֆֆիի յանձնարարութեան վրայ ստանձնած է փաճառել անմահ վիպասանին հայրենաշունչ երկերը. նոյնպէս Ազգ. Հիւանդանոցի սիկարի թղթերն ընտիր տեսակէ:

Բ Ա Ն Ա Ս Ե Ր
Հ Ա Ն Գ Ի Ս

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ, ՊՍՏՄԱԿԱՆ
 ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ
 Տիօրինութեամբ Տիար Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵՍՆԻ
 և աշխատակցութեամբ հայ և օտար
 արեւելագիտաց

Տարեկան բաժնեգինն է 4 դրբի համար 20 ֆրանք ամեն տեղ. իսկ մէկ գիրքը, 100 էջով, կ'արժէ 6 ֆրանք: Դիմել առ.

Mr. BASMADJIAN
 112, Boulevard Rochechouart 112
 PARIS

ՏՕՔ. ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ԺՕՐԺ ԷՎԼԵԱՆ

Ապսիւն, Շարհ Քուարի, Նո 55

Կը պատրաստէ կեղծ աղուաներ ամենափափուկ բերաններու և ամէն հասակի յարմար, ամերիկեան ամենափերշին դրութեամբ. վայրկենապէս կը դադրեցնէ աղուայի ցաւերը, նորագոյն մէթօտով կը լեցնէ փտած աղուաներ, ազնիւ ապրանքներով կատարելապէս կը բուժէ լինտերու և բերնի-զանաղան հիւանդութիւններ: Իր լեցուցած աղուաներուն տոկունութիւնն առնուազն երկու տարի կ'երաշխաւորէ:



Կարևոր է յայտարարել թէ՛ մեր բաժանորդաց մէջ եղան այնպիսիներ որ Հանդիսիս մինչև 10րդ թիւն ընդունելէ ետք, առանց վճարումի դադրեցուցին իրենց բաժանորդագրութիւնները. անազնիւ վարմունք մը զոր կը պարատրինք հրապարակել և հրաւիրել զիրենք որ հաճին իրենց ՎԵՅԱՄՍԵՍՅ պարտքը զրկել մեր հասցէին. նոյնպէս Ա. վեցամսեան աւարտելուն, թերթ պիտի ստանան ԱՅՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՄԻՍՅՆ որ մինչև Բ. վեցամսէի մուտքը ՎՃԱՐԱԾ Կ'ԸՂՂԱՆ իրենց բաժնեգինը:

